Հավելված N 1
ՀՀ վարչապետի N 977 - Լ
որոշման

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն հայեցակարգով սահմանվում են գնումների համակարգի զարգացման մոտեցումները, ներկա դրությամբ բացահայտված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները:

2. Գնումների համակարգի զարգացման հայեցակարգը կառուցված է կանոնակարգված ճկունության գաղափարախոսության առանցքի շուրջ: Գնումների համակարգն իր բնույթով կոչված է անորոշության պայմաններում ապահովելու կառավարության գործունեությունը, երբ հայտնի չեն ծառայությունների, ապրանքների և աշխատանքների փաստացի շուկայական արժեքները՝ մինչև պետության կողմից գնումների գործընթացի նախաձեռնումը: Նման փոփոխական միջավայրում համապարփակ և անփոփոխ կարգավորումները չեն կարող ապահովել հանրային օգուտների ժամանակին և արդյունավետ ստեղծումը: Մյուս կողմից մասնավոր գործընկերների և պատվիրատուների որակյալ պլանավորում և ռիսկերի կառավարում իրականացնելու համար անհրաժեշտ է անփոփոխ սկզբունքների առկայություն և պահպանում: Ուստի անհրաժեշտ է սահմանել այն մոտեցումները, որոնք հանդիսանում են գնումների համակարգի շարունակական փոփոխությունների կանոնակարգման հիմք:

Գնումների համակարգի զարգացման վերաբերյալ ցանկացած նախաձեռնություն պետք է գնահատվի ներքոնշյալ մոտեցումներին համապատասխան՝

1) գնումների համակարգի վերաբերյալ որակյալ տվյալների առավելագույն հասանելիություն՝ պատվիրատուների, հանրային, գործարար և գիտական համայնքների համար.

2) գնումների գործընթացի շրջանակներում փողի դիմաց առավելագույն արժեքի ապահովում.

3) մատակարարների կարողությունների զարգացում և մրցակցության աճ,

4) իրավական հստակություն.

5) նորարարական լուծումների խթանում.

6) գնագոյացման մեխանիզմների մոտարկում իրական շուկայական պայմաններին.

7) որոշումների կայացման իրավասությունների փոխանցում առավել տեղեկացված, ամբողջական պատասխանատվություն կրող անձանց/միավորներին:

II. Գնումների համակարգի խնդիրները

3. Թեև գնումների համակարգի ներդրված մոդելը հիմնականում բնորոշվում է միջազգային չափանիշներին համապատասխան[1], սակայն ներկայումս գործնականում տեսանելի են հետևյալ խնդիրները.

1) ղեկավար կազմի, պատասխանատու ստորաբաժանումների և գնումների մասնագետների միջև գնումների համակարգի վերաբերյալ տեղեկատվական խզումների առկայություն.

2) նախնական հսկողության գործառույթի իրականացման կարողության ցածր մակարդակ.

3) հակամրցակցային համաձայնությունների հակազդման ցածր կարողություններ և թույլ զարգացած մեխանիզմներ.

4) գնումների ոչ համարժեք պլանավորման պրակտիկա.

5) տեխնիկական առաջադրանքների մշակման կարողությունների ցածր մակարդակ.

6) պայմանագրերի կառավարման և որակի հսկողության կարողությունների ցածր մակարդակ.

7) ավտոմատացման ցածր մակարդակ և գործառնական անհամաչափ բարձր ծախսեր:

---

[1] ՍԻԳՄԱ, ԱԶԲ, ՀԲ, ՎԶԵԲ,

III. Գնումների համակարգի զարգացման հիմնական ուղղությունները

4. Գնումների համակարգի զարգացման հիմնական ուղղություններն են՝

1) կարողությունների զարգացում.

Գնումների համակարգում գործում են շուրջ 1500 որակավորված մասնագետներ և տարեկան կազմակերպվում է շուրջ 100.000 գնման գործընթաց: Գնումների մասնագետների վերապատրաստման և որակավորման համակարգը ներդրվել է 2017 թվականից, մասնավորապես՝ որակավորման շնորհման գործընթացը կազմակերպվում է էլեկտրոնային եղանակով իրականացվող թեսթավորման միջոցով: Որակավորված անձինք յուրաքանչյուր երեք տարին մեկ առնվազն 12 ժամ պարտադիր անցնում են շարունակական մասնագիտական վերապատրատման կուրս՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից սահմանված ծրագրով:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2019-2021 թթ. պետական կառավարման մարմիններից հավաքագրված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ նշված ժամանակահատվածում պայմանագրերի միակողմանի դադարեցման հավանականությունը կազմում է 0.57%, ավելին՝ պայմանագրի միակողմանի դադարեցման արդյունքում ապահովման միջոց «գանձվել է» միայն 10 դեպքում (այսինքն՝ փաստացի միջոց գանձելու հավանականությունը կազմում է 0.07%):

Առկա է այս իրողության բացատրության 2 տարբերակ՝

ա. գնումների համակարգը գործում է անթերի՝ ապահովելով պահանջված որակի ծառայությունների, աշխատանքների և ապրանքների մատակարարում հանրությանը,

բ. գնումների համակարգում առկա է առաջադրանքների մշակման և վերջիններիս հիման վրա պայմանագրերի կառավարման կրիտիկական խնդիր:

2021 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու վերջիններիս ենթակա միավորների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքներով կարելի է եզրակացնել,

որ գնումների գործող համակարգը բավարար չափով ճկուն է մրցութային գործընթացների կազմակերպման տեսանկյունից:

Սակայն վերոնշյալ ցուցանիշները, ինչպես նաև քննարկումների ընթացքում բարձրացված խնդիրները հուշում են, որ պլանավորման և պայմանագրերի կառավարման փուլերում առկա են խորքային խնդիրներ: Ուստի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ջանքերն ուղղված են գնումների գործընթացում ներագրավված և որոշումներ կայացնող անձանց կարողությունների շարունակական զարգացմանը.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դերի համապատասխանեցում առկա պահանջներին.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը շարունակելու է իրականացնել մեթոդական աջակցություն՝ կենտրոնանալով խորհրդատվության տրամադրման վրա, մասնավորապես՝ ռազմավարական նշանակություն ունեցող գործընթացների դեպքում: Ռազմավարական են համարվում այն գործընթացները, որոնց շրջանակներում մարմնի ղեկավարի կամ տեղակալի կողմից աջակցություն տրամադրելու վերաբերյալ դիմում է ներկայացվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն: Այնուամենայնիվ, խորհրդատվության տրամադրման գործառույթի իրականացումը չպետք է հանգեցնի գնումների պլանավորման, մրցույթի իրականացման կամ պայմանագրի կառավարման մեջ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ուղղակի ներգրավմանը, քանի որ դա կխափանի պետական կառավարման մարմինների անկախությունը՝ հանգեցնելով կարողությունների կորստի և կայացված որոշումների որակի վատթարացմանը: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կունենա խորհրդատուի դեր, սակայն վերջինիս կողմից տրամադրված խորհրդատվությանը հետևելու որոշումը, դրան համապատասխան գնման գործընթացի պատշաճ կազմակերպումը և արդյունքները շարունակելու են մնալ պատվիրատուների պատասխանատվության դաշտում: Միաժամանակ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հետևելու է ռազմավարական

նշանակություն ունեցող գործընթացների ընթացքում ի հայտ եկող համակարգային խնդիրներին և առաջարկելու է համապատասխան լուծումներ:

Պետական գնումները հաճախ կազմում են մասնավոր շուկայի զգալի մասը, հետևաբար գնումների համակարգի փոփոխությունները և համապատասխանեցումն արդի իրավիճակին, առանց մասնավոր հատվածի համակարգային ուսումնասիրության, անհնար է:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նախաձեռնելու է գնումների գործընթացներում հաճախ կրկնվող երկու ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների շուկաների ուսումնասիրություն՝ թիրախավորելով.

ա. գնագոյացման մեխանիզմների և արժեշղթաների բացահայտումը,

բ. շուկաներում կենտրոնացումը և այդ ուղղությամբ զարգացումները,

գ. շուկաների զգայունությունը տարածաշրջանին բնորոշ հիմնական ռիսկերի նկատմամբ:

Գնումների համակագը կարիք ունի շարունակական տվյալահենք ռիսկերի բացահայտման համակարգի ներդրման: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, համագործակցելով շահագրգիռ մարմինների հետ, ապահովելու է բավարար տեղեկատվության հավաքագրում՝ հնարավոր ռիսկերը կանխելու նպատակով:

Որպես ամբողջական համակարգ պետական գնումների վերաբերյալ ժամանակակից գիտական համայնքի հետաքրքրությունը ի հայտ է եկել վերջին տարիների ընթացքում, ինչը նշանակում է, որ առկա է նոր գիտելիքի ստեղծման չբացահայտված զգալի ներուժ: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը աջակցելու է գիտական, այդ թվում՝ միջազգային համայնքին, առավել մեծ քանակությամբ տեղեկատվություն տրամադրելով առկա համակարգի վերաբերյալ: Հատուկ դեպքերում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դիտարկելու է առավել բարձր հետաքրքրություն ներկայացնող գաղափարների թեսթավորման շրջանակներում փորձարկումների իրականացումը: Արդյունքում Հայաստանի Հանրապետության գնումների համակարգը կկարողանա կլանել միջազգային առաջադեմ գիտելիքը և փորձը:

Գնումների համակարգը ներկա դրությամբ արդեն իսկ թույլ է տալիս հետևել Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից բխող միջոցառումների կատարողականի ընթացքին և կանխավ բացահայտել ու չեզոքացնել առկա ռիսկերը: Սակայն մինչև նոր թվային համակարգի գործարկումը՝ համապատասխան զեկույցի նախապատրաստման համար անհրաժեշտ է լինելու մարդ/ժամերի ծախս: Ուստի մինչև թվային համակարգի գործարկումը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարությունը ստանձնելու է համապատասխան զեկույցների պատրաստման աշխատանքների պատասխանատվությունը՝ որպես համակարգին տիրապետման առավել բարձր կարողություններ ունեցող մարմին.

3) էլեկտրոնային գնումների նոր համակարգի մշակում.

Էլեկտրոնային գնումների նոր համակարգի ներդրումը ենթադրում է գնումների ողջ գործընթացի հնարավորինս ավտոմատացում, ինչը պարունակում է նաև պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման իրական ներուժ:

Նոր տեխնոլոգիան զգալիորեն բարելավելու է պետական գնումների կառավարումն ու արդյունավետությունը, արդիականացնելու է պետական վարչարարությունը, ինչպես նաև նպաստելու է Հայաստանում գնումների համակարգի համապարփակ բարելավմանը: Տեխնոլոգիաների ներդրմանը զուգընթաց իրականացվելու է առկա գործընթացների ուսումնասիրություն և լավարկում՝ նպատակ ունենալով ապահովել սահուն անցում արդյունավետ ավտոմատացմանը:

Էլեկտրոնային գնումների նոր համակարգի ներդրման ծրագիրը հանդիսանալու է էլեկտրոնային կառավարման համակարգի բարեփոխումների բաղկացուցիչ մաս:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը թիրախավորելու է էլեկտրոնային գնումների ժամանակակից, լիարժեք, բոլոր բիզնես գործընթացները ներառող, գնումների համակարգին առնչվող այլ համակարգերի հետ ամբողջովին ինտեգրված արդիական ազգային համակարգի ստեղծում՝ դրա տիրույթում ներառելով բոլոր պատվիրատուներին.

4) ստանդարտացում և կանաչ գնումներ.

Գնումների մասնագետները և պատասխանատու ստորաբաժանումները հաճախ ծանրաբեռնված են լինում պարբերական գնումների գործընթացների կազմակերպմամբ, ինչի արդյունքում տուժում են ռազմավարական նշանակություն ունեցող գնումների գործընթացները: Համագործակցելով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ՝ կմշակվեն առավել հաճախ կրկնվող, ինչպես նաև կանաչ համարվող ապրանքների հիմնական նկարագրությունները և վերջիններիս հիման վրա՝ պայմանագրերի կառավարման ուղեցույցները, որոնք ուղենիշային կդառնան դրանց ձեռքբերման ժամանակ առաջադրանքները կազմելիս: Թվային համակարգի միջոցով հնարավորություն է ընձեռվելու փոփոխել վերոնշյալ բնութագրերը, իսկ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը տարեկան կտրվածքով վեր է հանելու առավել արդյունավետ համարվածները՝ ուղենիշային բնութագրերի լավարկման նպատակով.

5) համակարգի շարունակական թիրախային բարելավումներ.

Իրավական դաշտի շարունակական կատարելագործումը ենթադրում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության շարունակական ներդաշնակեցում իրավակիրառ փորձին, ինչպես նաև համապատասխանություն միջազգային լավագույն չափանիշներին՝ պարբերաբար համակարգում խնդիրները բացահայտելու նպատակով ախտորոշումների իրականացման միջոցով: Այս նպատակով առանձնապես կարևորվում է համագործակցությունը համապատասխան միջազգային կազմակերպությունների, պատվիրատուների, մասնագիտական, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի միավորների հետ:

Քննարկումները իրականացվելու են կիսամյակային պարբերականությամբ, որոնց արդյունքում արձանագրված խնդիրներն ու լուծումները ներկայացվելու են կառավարությանը՝ որպես սույն հայեցակարգի կատարումից բխող միջացառումներ:

2021 թվականի ընթացքում իրականացված քննարկումների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները և դրանց լուծման առաջարկությունները ներկայացված են N 2 հավելվածում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

25.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ